ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«28» փետրվարի 2017թ. № 72-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի ԹԻՎ 667-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 667-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5 և 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ի»-ի 2.3 կետով հաստատված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման կարգի 3-րդ ենթակետում «ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝» բառերը փոխարինել «ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝» բառերով.

2. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.1 կետով հաստատված «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման կարգի 1-ին ենթակետում «ներկայացնում է նաև նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝» բառերը փոխարինել «ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճեները, իսկ այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝» բառերով.

3. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.4, 2.1, 2.4, 5.1, 5.4, 5.1.1, 5.1.4 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ ΙΙ»-ի 3.1 կետի «բ)» ենթակետում, 1.2, 1.3, 1.5, 1.6, 2.2, 2.3, 2.5, 2.6, 5.2, 5.3, 5.5, 5.6, 5.1.2, 5.1.3, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ ΙΙ»-ի 3.1 կետի «ա)» ենթակետում, 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.1 կետի 1-ին ենթակետում և 5.2.4, 5.2.5, 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.3 կետի 1-ին ենթակետում «պայմանագրի պատճենը» բառերը փոխարինել «պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճեները» բառերով.

4. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.3 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.5 կետի 1-ին ենթակետերում, 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.1 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.3 կետի 1-ին ենթակետերում և 5.2.4, 5.2.5, 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.1 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.5 կետի 1-ին ենթակետերում «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի,» բառերով.

5. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.3 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.5 կետի 2-րդ ենթակետերում, 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.1 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.3 կետի 2-րդ ենթակետերում, 5.2.4, 5.2.5, 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ Ι»-ի 2.1 կետով հաստատված «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման կարգի և «ՄԱՍ ΙΙ»-ի 2.2.5 կետի 2-րդ ենթակետերում, ինչպես նաև 1.1, 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.6, 2.1, 2.2, 2.3, 2.4, 2.5, 2.6, 5.1, 5.2, 5.3, 5.4, 5.5, 5.6, 5.1.1, 5.1.2, 5.1.3, 5.1.4, 5.1.5, 5.1.6, 5.2.1, 5.2.2, 5.2.3, 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 3.5-ին

կատարված հղումում /footnote/ «կամ Մասնակիցը ֆիզիկական անձ է» բառերը փոխարինել «կամ Մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է» բառերով.

6. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.4, 2.1, 2.4, 5.1, 5.4, 5.1.1, 5.1.4, 5.2.1 և 5.2.4 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 4-ի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

7. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.2, 1.5, 2.2, 2.5, 5.2, 5.5, 5.1.2, 5.1.5, 5.2.2 և 5.2.5 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 4-ի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

8. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.3, 1.6, 2.3, 2.6, 5.3, 5.6, 5.1.3, 5.1.6, 5.2.3 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 4-ի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

9. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.1, 1.2, 1.3, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, 5.3, 5.1.1, 5.1.2, 5.1.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.7 և 4.2 կետերում, 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.5 և 3.2 կետերում, 1.4, 2.4, 5.4, 5.1.4, 5.2.4, 5.2.5, 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.12 և 4.1.1 կետերում և 1.5, 1.6, 2.5, 2.6, 5.5, 5.6, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.10 և 4.1.1 կետերում «ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ» բառերը փոխարինել «արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ» բառերով.

10. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված՝ 1.1, 2.1, 5.1, 5.1.1 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ I»-ի 4.3-րդ կետի «է.» ենթակետը, 7.2.3-րդ կետի «բ.» ենթակետը, «ՄԱՍ II»-ի 2.2.9 կետը, 4.2-րդ կետի «բ.» ենթակետը, 5.2.1 հավելվածով սահմանված հրավերի օրինակելի ձևի «ՄԱՍ I»-ի 3.3-րդ կետի «թ.» ենթակետը, 5.2 կետի 6-րդ ենթակետի «դ.» պարբերությունը, «ՄԱՍ II»-ի 2.2.9 կետը, 3.2 կետի վերջին նախադասությունը, 1.4, 2.4, 5.4, 5.1.4 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ I»-ի 4.3-րդ կետի «է.» ենթակետը, 7.2.2-րդ կետի «բ.» ենթակետը, «ՄԱՍ II»-ի 2.2.8 կետը, 4.1.1-ին կետի «բ.» ենթակետը, 5.2.4 հավելվածով սահմանված հրավերի օրինակելի ձևի «ՄԱՍ I»-ի 3.3-րդ կետի «թ.» ենթակետը, 5.2.2 կետի «բ.» ենթակետը, «ՄԱՍ II»-ի 2.2.8 կետը, 4.1.1-ին կետի «բ.» ենթակետը, ինչպես նաև 1.1, 2.1, 5.1, 5.1.1, 5.2.1, 1.4, 2.4, 5.4, 5.1.4 և 5.2.4 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 4.2-ը և Հավելված 6-ի 6.6 կետը ուժը կորցրած ճանաչել.

11. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ ենթակետերով հաստատված՝ 1.1, 1.2, 1.3, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, 5.3, 5.1.1, 5.1.2 և 5.1.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.1 կետում «ստորագրված և կնքված» բառերից հետո ավելացնել հղում /footnote/ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում սույն հայտարարության մասնակցի կողմից կնքված լինելու պահանջը պարտադիր չէ:».

12. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված՝ 1.1, 1.2, 1.3, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, 5.3, 5.1.1, 5.1.2, 5.1.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 3.3 կետը, 5.2.1 հավելվածով սահմանված հրավերի օրինակելի ձևի «ՄԱՍ II»-ի 2.2.10 կետը և 5.2.2, 5.2.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 2.2.8 կետը ուժը կորցրած ճանաչել.

13. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված՝ 1.1, 1.2, 1.3, 2.1, 2.2, 2.3, 5.1, 5.2, 5.3, 5.1.1, 5.1.2, 5.1.3 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ի 5.1 կետը և 5.2.1, 5.2.2, 5.2.3 հավելվածով սահմանված հրավերի օրինակելի ձևի «ՄԱՍ II»-ի 4.1 կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում մասնակցի կազմած՝ սույն հրավերով նախատեսված, փաստաթղթերը պարտադիր չէ, որ կնքված լինեն վերջինիս կողմից:».

14. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.4, 1.5, 1.6, 2.4, 2.5, 2.6, 5.4, 5.5, 5.6, 5.1.4, 5.1.5, 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ I»-ի 7.9 կետի 2-րդ նախադասությունը և 5.2.4, 5.2.5, 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ I»-ի 5.9 կետը «հաստատված» բառից հետո լրացնել «՝ ստորագրված և կնքված» բառերով.

15. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ և 5.1-րդ ենթակետերով հաստատված 1.4, 1.5, 1.6, 2.4, 2.5, 2.6, 5.4, 5.5, 5.6, 5.1.4, 5.1.5 և 5.1.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի

1) «ՄԱՍ II»-ի 2.2.1 կետից հանել «ստորագրված և կնքված» բառերը.

2) «ՄԱՍ II»-ի 3.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:».

16. Հրամանի 1-ին կետի 5.2-րդ ենթակետով հաստատված 5.2.4, 5.2.5 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի «ՄԱՍ II»-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.3 կետով.

«2.3 Սույն հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:».

17. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.4, 2.4, 5.4, 5.1.4 և 5.2.4 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 6-ի

1) 6.2 կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4) :».

2) 6.3 կետի «ա)» ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.».

3) 6.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:».

4) 6.5 կետը «Վաճառողին է տրամադրում» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով» բառերով.

18. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.5, 2.5, 5.5, 5.1.5 և 5.2.5 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի

1) Հավելված 6-ով հաստատված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ---------- ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ»

ա. 3.1 կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):».

բ. 3.2 կետի «ա)» ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.».

գ. 3.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած

ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:».

դ. 3.4 կետը «Կատարողին է տրամադրում» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով» բառերով.

2) Հավելված 6-ով հաստատված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ»

ա. 4.1 կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:».

բ. 4.2 կետի 1-ին ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.».

գ. 4.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 4.2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը:».

դ. 4.5 կետը «Կապալառուին է տրամադրում» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով» բառերով.

19. Հրամանի 1-ին կետի 1-ին, 2-րդ, 5-րդ, 5.1-րդ և 5.2-րդ ենթակետերով հաստատված 1.6, 2.6, 5.6, 5.1.6 և 5.2.6 հավելվածներով սահմանված հրավերների օրինակելի ձևերի Հավելված 6-ի

1) 3.1 կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3):».

2) 3.2 կետի «ա)» ենթակետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի

կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.».

3) 3.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _____օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ծառայությունը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 3.2-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:».

4) 3.4 կետը «Կատարողին է տրամադրում» բառերից առաջ լրացնել «էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով» բառերով:

20. Սույն հրամանով փոփոխված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը չեն տարածվում սույն հրամանի ուժի մեջ մտնելու պահին սկսած և չավարտված գնման գործընթացների վրա:

21. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, բացառությամբ սույն հրամանի 17-րդ, 18-րդ և 19-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի ապրիլի 1-ից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ